

Ֆ. ՇԻԼԼԵՐԻ «ԱՎԱԶԱԿՆԵՐԸ» ԵՎ Պ. ՊՈՌՇՅԱՆԻ «ՅՈՒՆՈՆ»

Ա. Ս. ԲԱԳՈՅԱՆ

ԳՊՀ դասախոս

Գերմանական լուսավորական գրականության խոշոր ներկայացուցիչ Ֆ. Շիլլերը գրական ասպարեզ մուտք գործեց բուն ու կրակոտ «Ավազակներ» դրամայով, որը «Գրոհ և փոթորիկ» («Sturm und Drang») շարժմանը բնորոշ ստեղծագործություն էր՝ ուղղված ընդդեմ բռնակալների¹: Իբրև բնաբան ընտրված Յիպկրատի հայտնի խոսքն² այլաբանական մի կոչ էր, դեղատոմս, ըստ որի հասարակական ախտերը հնարավոր է բուժել միայն «երկաթի ու կրակի»՝ հրի ու սրի օգնությամբ: «Բռնակալության դեմ ուղղված Շիլլերի ցասումը, նրա ազատաբաղձ իդեալները, գրում է Ա. Բաբայանը, հայ ժողովրդի սրտին և հոգուն մոտ են եղել: Նա այդ գաղափարների մեջ տեսել է իր դարավոր իդեալը, երազանքները՝ ազատագրվելու օտարի բռնակալական լծից»³: Ուստի պատահական չէ, որ բազմաթիվ հայ գրողներ ոգեշնչվել են շիլլերյան ազատաշունչ գաղափարներով, ստեղծագործել՝ ակնհայտորեն կրելով այդ գաղափարների ուղղակի ազդեցությունը:

Հայ գրականության պատմության մեջ Պռուշյանի ստեղծագործության վրա Շիլլերի գաղափարների անմիջական ազդեցության մասին վկայող որևէ ակնարկ գոյություն չունի: Նա ինքն իր հուշերում երբևէ չի խոսում այս հեղինակի ստեղծագործությանը ծանոթ լինելու մասին: Ավելին, 1902թ. դեկտեմբերին Յու. Վեսելովսկուն գրած պատասխան նամակում Պռուշյանը, ի դեմս ռուս հեղինակների, բացառում է **օտարազգի հեղինակների** գաղափարական ազդեցությունն իր ստեղծագործության վրա⁴: Նույն այս նամակում Պռուշյանը հայտնում է այն միտքը, թե միակ անձնավորությունը, որ «անմիջական ազդիչ մասնակցություն» է ունեցել իր ամբողջ գրական գործունեության մեջ, խաչատուր Աբովյանն է, որի «Վերք Հայաստանի»-ն «մտավոր խթան է հանդիսացել» իր համար⁵: Այսուհանդերձ, Պռուշյանի ստեղծագործության վրա շիլլերյան գաղափարների ազդեցությունն ակնհայտ է: Այն, մեր կարծիքով, տեղի է ունեցել ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված ձևով, և այդ գրական «միջնորդը» եղել է հայ մեծ լուսավորիչ խաչատուր Աբովյանը, որին Պռուշյանն առաջին անգամ հանդիպել է դպրոցական տարիներին⁶ ու մեկընդմիջտ դարձել նրա երկրպագուն:

¹ Բնաբաններից մեկն է՝ Սոփոկլեսը: Սոփոկլեսը:

² Quae medikamenta non sanant, ferrum sanat, quae ferrum non sanat, ignis sanat. Որտեղ չեն օգնում դեղորայքը, օգնում է երկաթը, որտեղ չի օգնում երկաթը, օգնում է կրակը:

³ Ա. Բաբայան, Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում, Եր., 1959, էջ 100:

⁴ Պ. Պռուշյան, Եժ, հտ. 3, Եր., 1954թ., էջ 631-632 (Ընդգծումը մերն է - Ա. Բ.):

⁵ Նույն տեղում:

⁶ Պ. Պռուշյան, Եժ, հտ. 3, Եր., 1959թ., «Գյուղական վարժապետներ», էջ 37-44, «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» և իմ «Սոս և Վարդիթերը», էջ 493:

Աբովյանն այն հեղինակն էր, որը հայ իրականության մեջ առաջինն է խոսել գերմանացի մեծ լուսավորչի մասին և խանդավառված նրա ազատասիրական գաղափարներով՝ առաջինն է թարգմանել նրա երկերը հայերեն: Արևմտահայ հրապարակախոս Ստեփան Ոսկանի վկայությամբ՝ ֆրանսիացի մի ճանապարհորդ Աբովյանի մասին նույնիսկ ասել է, թե՝ «Շիլլերը ջուրի պես գիտե...»⁷: Աբովյանն ինքը Շիլլերի մասին գրել է. «...Եթե կա մեկը, որն իմ ապագա կյանքում հոգուս պահապանը, իմ առաջնորդն է լինելու, ապա դա պետք է նրա վեհ ոգին լինի»:

Հետևապես Պռուշյանը, իբրև Խ. Աբովյանի «գրական դպրոցի» ակնառու ներկայացուցիչը և իբրև մի մտավորական, որն ակտիվ մասնակցություն է ունեցել իր ժամանակի գրական, մանկավարժական և թատերական կյանքին, չէր կարող ծանոթ չլինել Շիլլերի ստեղծագործությանը և նրա արժարժած գաղափարներին:

Իր առաջին խոշոր ստեղծագործության մեջ՝ «Կռվածաղիկ» վեպում Պռուշյանը հանդես է բերում ըմբոստ մի հերոսի՝ Վարդի կերպարը, որն ամենուրեք ակամատես լինելով բռնությունների և անարդարությունների՝ հասկանում է, որ բռնությունը կարելի է ոչնչացնել միայն զենքի ուժով, որ պետք է առաջնորդվել «ակն ընդ ական» և «ատամն ընդ ատաման» սկզբունքներով, այլ ոչ թե ստրկամտորեն հնազանդվել քրիստոնեական համբերություն քարոզող հոգևորականներին:

Վարդի կերպարն, անշուշտ, նորություն չէր հայ իրականության մեջ: Ինչպես նշում է Ս. Սարինյանը, Վարդը մարմնավորում էր ժողովրդական հերոսությունը և «իր գաղափարախոսությամբ ու գործելակերպով ոչ միայն հետևում էր Աբովյանի Աղասուն, այլև ծայնակցում էր Րաֆֆու նույնատիպ հերոսներին»⁸: Իսկ վերջիններս հիրավի որոշակիորեն կրում են շիլլերյան ավագակապետի գաղափարական ազդեցությունը: Սակայն այս կերպարը նորություն էր Պռուշյանի ստեղծագործության մեջ, որը զարգանալով և համալրվելով նոր որակներով՝ 1892թ. հանդես է գալիս «Մեր Խեչոն» պատմվածքում ի դեմս «բռնցքաչափ զգգնած հալիվորի», որը «մի ժամանակ աշխարհք է դողացրել»⁹:

Խեչոյի անունը սարսափ էր ազդում պարսկական, տաճկական և ռուսական սահմանագլուխների նահանգներում, չնայած որ ինքը թե՛ արտաքինով, թե՛ վարքագծով և թե՛ խոսքով «ոչ թե արենիսում ավագակի էր նման, այլ ... գիտնական փիլիսոփայի և ամենաքաղաքավարի ուսումնականի»¹⁰: Հեղինակը բազմիցս շեշտում է, որ Խեչոն երբևէ անմեղ արյուն չի թափել: Տասնյոթ տարեկանից նա զբաղվել է ավագակությամբ և քսաներեք տարի շարունակ պայքարել «աղքատի բերանից պատառ խլող», «իրանց ռահաթին զրկող», ժողովրդին կեղեքող կալվածատերերի, խարդախ բազագների և սրանց նմանների դեմ: Կարլ Մոորի պես նա թշվառների պաշտպանն ու հովանավորն էր և պայքարում էր հասարակական անարդարությունների դեմ: Նրա ընկերներն իր սպանած ավագակների խմբա-

⁷ «Արևմուտք», Փարիզ, 1859թ., համար 6, էջ 42:

⁸ Պ. Պռուշյան, ԵԺ 7 հատորով, հտ. 1, Եր., 1962թ., էջ 11 (Ս. Սարինյանի առաջաբանը):

⁹ Պ. Պռուշյան, ԵԺ 3 հատորով, հտ. 3, Եր., 1954թ., էջ 70:

¹⁰ Նույն տեղում, էջ 71:

պետներն էին, որոնք մտել էին «Խեչոյի պես պստիկ հայի բուռը» և հավատարմությամբ ենթարկվում էին նրա հրամաններին: Այսուհանդերձ, Խեչոյի խմբակիցները միշտ չէ, որ համամիտ էին նրա հետ, բայց երկար ժամանակ վախենում էին արտահայտել իրենց տրամադրությունը: Սակայն մի օր, հերթական հանձնարարությունը կատարելիս, օգտվելով Խեչոյի բացակայությունից՝ նրանք գլխատում են մի հայ քահանայի և որոշում տարեկան մի քանի տերտեր սպանել: «Մենք էլ իրա վրեժը կառնենք իր ազգից», պատճառաբանում են ավագակները՝ չիմանալով, որ Խեչոն աննկատելիորեն մոտեցել և լսել էր նրանց ամբողջ խոսակցությունը: Խեչոն առերես խրախուսում է ընկերների արարքը, բայց մի օր էլ Պարսկաստանում տեսնելով մի քանի *սեյիդ, դավրիշ ու մուլլա*¹¹, ավագակներին հրամայում է մորթել իրենց հոգևորականներին և գլուխները շարել իրար մոտ: «Եթե ձեր մորթած տերտերը մի գյուղի էր միայն վնաս տալի, ասում է Խեչոն հեգնական ժպիտով, էս քաղցած գայլերն և իրանց նմանները թյուրք ու հայի գլուխ չեն թողնում, ոտնատակ են տալիս»¹¹:

Այս կերպ լուծելով սպանված հայ քահանայի վրեժը՝ Խեչոն հրաժարվում է իր խմբից՝ համոզվելով, որ իր ընկերներն ամենահին էլ չեն կիսում իր գաղափարները: Նա թողնում է ավագակությունը, իր նախկին ընկերներին համարում իր թշնամիները և երդվում հայ քահանայի անմեղ արյունով, որ մինչև բոլոր չարագործներին արդարության աստյանին չմատնի, չի հանգստանա: Խեչոն հետապնդում է բոլոր ավագակներին և չարագործություն անելիս պատժում նրանց: Քահանային սպանողին նույն ձևով գլխատում է, իսկ մյուսներին «սիրիական» անում:

Գրականագետ Ա. Ինճիկյանը գտնում է, որ այսպիսի վերջաբանը «կեղծ ու անհամոզիչ է ստացվել», քանի որ մարդկանց միավորող «տնտեսական-հասարակական գործոններն ավելի զորեղ են և հիմնավոր»¹², քան ազգային պատկանելության, կրոնի և դավանանքի խնդիրը, որը դառնում է խմբի պառակտման պատճառը: Ի տարբերություն հայ ժողովրդի անցյալի և մեր օրերի, քսաներորդ դարակեսին վերոհիշյալ խնդիրներն այլ լույսի տակ էին դիտարկվում, սակայն տասնիններորդ դարավերջին այս պատմվածքը կենսական նշանակություն ուներ: Հիրավի, լուծումը փոքր-ինչ պարզունակ է ստացվել, սակայն, մեր կարծիքով, այս վերջաբանի շնորհիվ Պռոշյանի «Մեր Խեչոն» պատմվածքն ավելի է մոտենում Շիլլերի «Ավագակներին»: Կարլ Մոորի խմբում ևս գոյություն ունեին պառակտիչ ուժեր՝ ի դեմս Շպիգելբերգի և նրա համախոհների, որոնց համար օտար էին սկզբունքային ավագակապետի ազնիվ գաղափարները, և ի վերջո այդ ուժերն իրենց արժանի հատուցումն են գտնում:

Պռոշյանի «Մեր Խեչոն» պատմվածքում չկան գաղափարական այնպիսի ընդհանրացումներ, ինչպիսիք մենք տեսնում ենք Շիլլերի «Ավագակներում»: Հեղինակն այստեղ ավելի շատ շեշտը դնում է ոչ այնքան հասարակական, որքան ազգային և դավանաբանական բնույթի բախումների վրա՝ ցույց տալով իր էությամբ միջավայրից բարձր կանգնած անհատին:

Սոցիալական անհավասարության դեմ միայնակ պայքարի ելած ավագակի կերպարը Պռոշյանի ստեղծագործության մեջ ներքին զարգացում է ապրում, և

¹¹ Պ. Պռոշյան, ԵԺ 3 հատորով, հտ. 3, Եր., 1954թ., էջ 78:

¹² Նույն տեղում, էջ 634:

1900 թվականին ասպարեզ է գալիս Յունոն՝ Պռոշյանի համանուն վիպակում: Ի դեմս Յունոյի հեղինակը կերտել է բունտար հերոսի այնպիսի մի կերպար, որը ոչ միայն իր գաղափարներով, այլև իր ճակատագրով չափազանց մոտ է կանգնած չիլլերյան հայտնի ավազակապետին: Սակայն, ի տարբերություն Կարլ Մոորի, որին ավազակային պայքարի մղող հիմնական դրդապատճառը նրա անձնական դրաման էր, Յունոն, ինչպես մյուս բունտար հերոսները հայ գրականության մեջ¹³, ընդվզում է ոչ միայն հասարակական անարդարությունների դեմ, այլև՝ ազգային: Նա զենք է վերցնում բռնության ու կամայականությունների դեմ և «իր անձնականի վրայով հանգում է ընդհանուրի շահերի պաշտպանության գիտակցությանը»¹⁴: Վեպի հենց սկզբում իբրև նրա ավազակության շարժառիթ նշվում է «հայերին թյուրքերի տված նեղությունից ազատելու ուխտը»¹⁵: Իսկ մեկ այլ առիթով նա Նադոյի շուրթերով խոստովանում է, որ որոշել էր «չափար (ոստիկան) գրվել, որ ինչ տեղ ավազակներ կան, իրան դրկեն բռնելու»¹⁶: Բայց ճակատագրական դիպվածը դեպքերն այլ կերպ է դասավորում: Յունոն սպանում է Ջաքոյին և ականա դառնում ավազակ՝ ցանկանալով այդ կերպ քավել իր մեղքը: Նա, ինչպես Կարլ Մոորը, հավաքում է երեսուն կտրիճներից բաղկացած մի խումբ և անգիջում պայքարի ելնում ընդդեմ «մարդակեր ավազակների» և «խեղճերի հոգեհանձների»: Յունոն ավազակ էր՝ բառի ոչ բուն ըմբռնումով: Վեպում նա բնութագրվում է «խեղճերի ու անգորների պաշտպան», «ազնիվ գաղափարական հերոս», «գաղափարական ավազակապետ» և նման արտահայտություններով: Սակայն ««գաղափարական ավազակը», - գրում է Ս. Սարինյանը՝ Յունոյի կերպարը քննելիս, - վերանում է անձնական վրիժառության մղումներից և իր գործունեության մեջ դնում սոցիալական ավելի մեծ բովանդակություն»¹⁷:

Յունոն համաշխարհային գրականությանը հայտնի «գաղափարական ավազակի» հայկական տարատեսակն է, որը չի կարող անտարբեր լինել ոչ միայն հասարակության մեջ տիրող անարդարությունների և սոցիալական անհավասարության (այս երևույթն ընդգծված է նաև Ջաքոյի և Յունոյի անձնական փոխհարաբերություններում, երբ սրտակից ընկերը դրժում է իր տված խոսքը, մոռանում պայմանավորվածությունը և վարվում նրա հետ այնպես, ինչպես մի ստորադասի, «ծիու գլուխը բռնող» ծառայի, որն արժանի չէ անգամ տուն մտնելու և այլն), այլև իր ազգակիցներին ճնշող օտարազգի բռնակալների նկատմամբ: Առհասարակ նա մեծագույն մարդասեր է, որը պատրաստ է օգնության հասնելու ոչ միայն հայ, այլև «վիզն արևառ, հողագործ, դառը քրտինքով իր ցամաք հացը ճարող»¹⁸ թուրք գյուղացիներին: «Յունոն որդեգրվել էր աղքատների պաշտպա-

¹³ Սարհատի մասին մենք արդեն խոսել ենք «Շիլլերի «Ավազակները» և Րաֆֆու «Ջալալեդդինը»» հոդվածում: Տե՛ս ՀՀ ԿԳՆ ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու 4, Գավառ, 2000, էջ 124-128:

¹⁴ **Պ. Պռոշյան**, Եժ 7 հատորով, հտ. 1, Եր., 1962, էջ 27 (Ս. Սարինյանի առաջաբանը):

¹⁵ **Պ. Պռոշյան**, Երկեր, Եր. 1987, էջ 228:

¹⁶ Նույն տեղում, էջ 241:

¹⁷ **Պ. Պռոշյան**, Եժ 7 հատորով, հտ. 1, Եր., 1962, էջ 28; **Պ. Պռոշյան**, Եժ 7 հատորով, հտ. 1, Եր., 1962, էջ 27 (Ս. Սարինյանի առաջաբանը):

¹⁸ Նույն տեղում, էջ 228:

նությանը և պատերազմ հայտարարել գյուղական ցեղերին»¹⁹, - գրում է Կ. Ա. Դանիելյանը: Հենց այս հանգամանքով է պայմանավորված հասարակության երկակի վերաբերմունքը Հունոյի նկատմամբ:

Ընչազուրկների նկատմամբ գթասրտությունը բնորոշ է նաև Կարլ Մոորին, որին ամեն կերպ պախարակում էր նրա եղբայրը՝ Ֆրանցը, որն ի թիվս Կարլի «հանցանքների» նշում է նաև այն, որ մանուկ ժամանակ առաջին իսկ մուրացկանի գդակի մեջ էր նետում հորից կորզած փողերը: Արդեն այն ժամանակ ծերունի Մոորը որդու մեջ տեսնում էր այն «կրակոտ ոգին», «անվեհեր քաջությունը», «ամենական պատվասիրությունը և անընկճելի կամակորությունը», միաժամանակ՝ պարզ սիրտը, կարեկցանքը և բազմաթիվ առաքինություններ, որոնք «մի սրտակից ընկեր, մի մի պատվական քաղաքացի, մի մեծ մարդ կանեն նրան...»²⁰: Սակայն Ֆրանցը, որ բողոք ուներ բնության դեմ, քանզի ծնվել էր գարշելի արտաքինով և նույնպիսի ներաշխարհով, նախանձելով եղբորը նրա խիզախության ու վեհանձնության, բնատուր խելքի և գեղեցկության, ծնողների առաջնեկը և հոր սիրելին լինելու համար, այնպիսի մի դավ է նյութում թե՛ հոր և թե՛ եղբոր դեմ, որ երկուսն էլ խոր հիասթափություն են ապրում՝ կործանված տեսնելով իրենց լուսավոր երազանքներն ու հույսերը: Նա ընտրում է բռնությանը իր իրավունքը նվաճելու ճանապարհը՝ համոզված, որ «ուժն ուժով է խորտակվում» և որ «իրավունքը միայն հաղթողինն է»: Իսկ մարդկային խիղճն ու սերը նա համարում է «շատ գովելի գյուտեր՝ ...հիմարներին սանձելու և ռամիկներին ոտքի տակ պահելու համար»: « Խիղճ: Օ՛, այո՛, մի պատվական խրտվիլակ՝ ճնճողներին պարտեզից դուրս քշելու համար»²¹, հեզնում է Ֆրանցը: Իսկ Հունոն ցավով փսատում է. «Աշխարհքումս ո՞վ է տեսել արդարություն, գութ, խղճմտանք, աշխարհքումս արդարն ու լավը նա է, ով քսակումը ոսկիք, ձեռին իրավունք ունի, ...բարերարը նա է, ով իրանից անգործին, իրանից խեղճին մրջմի պես ոտքի տակը կքցի, կճխլի ... ու գլուխը բարձր բռնած՝ իր արածովը կպարծենա...»²²:

Թե՛ Հունոն և թե՛ Կարլ Մոորը աչքի են ընկնում բարոյական բարձր հատկանիշներով: Եթե երբևէ մեղանշել են բարոյական օրենքների դեմ, ապա՝ ակամա, հանգամանքների բերումով: Նրանք զղջում են անցյալում կատարած հանցանքների և ավազակության անպատվաբեր ճանապարհին կանգնելու համար, քանզի երկուսն էլ ունեին փառահեղ ապագայի հեռանկար: Կարլը ուներ սիրող հայր և մի եղբայր, որն իր հակապատկերն էր և պատրաստ էր ամեն ինչի, որպեսզի Կարլին զրկի ունեցվածքից, իշխանությունից, հայրական սիրուց և սիրելի էակից՝ Ամալիայից: Հունոն թեև որք էր, սակայն Ջաքոյի հետ հարազատ եղբոր պես էր: Մելիք Մրտոյին նա ընդունում էր իբրև ծնողի, որի սերը թանկ էր նրա համար: Սակայն աղա Ավոյի դուստրը, անտեսելով հոր մտադրությունը, նախընտրում է Հունոյին, և վերջինիս համար Գյուլոյին տիրանալը պատվի խնդիր է դառնում: Նա չի հանդուրժում ո՛չ Մելիքի, ո՛չ Ջաքոյի անարդարացի վերաբերմունքը:

¹⁹ **Պ. Պռոշյան**, Երկեր, Եր., 1984, էջ 18 (Կ. Դանիելյանի առաջաբանը):

²⁰ **Ֆ. Շիլլեր**, Ընտիր երկեր, Եր., 1952, էջ 40:

²¹ Նույն տեղում, էջ 45:

²² **Պ. Պռոշյան**, Երկեր, Եր. 1987, էջ 410:

Սպանելով Ջաքոյին՝ նա զղջում է իր արարքի համար և իր գործունեությամբ փորձում է քավել իր մեղքը: Մեկիքը հրաժարվում է Յունոյից, որին սիրում էր հարազատ որդու պես: Սակայն տարիների հեռավորությունից նա պատրաստ էր ներելու Յունոյին: Նույն տրամադրությամբ է համակված նաև ծերունի Մոորը, որը պատրաստ էր ներելու իր «անառակ որդուն»:

Մոորին ավագակային պայքարի մղող հիմնական դրդապատճառը եղբոր կողմից գրված այն կեղծ նամակն էր, համաձայն որի հայրը մերժում է Կարլի զղջումը և հրաժարվում նրանից: Բայց անձնական դրաման վերաճում է համամարդկային խնդիրների հոլովույթի, և վրդովված Կարլը իր բողոքն է հայտնում ընդդեմ օրենքի, որը «խխունջի նման սողալ է ստիպում այն մարդուն, որ կարող էր թռչել արծվի պես»²³: Օրենքը նա հակադրում է ազատությանը, բայց և չի խնայում օրենքը ի շահ հարուստների ծառայեցնող փաստաբանին՝ ասելով. «Դու՞ ես այն անզգամը, որ անառակի պաշտոն ես վարել տալիս օրենքին»²⁴: Կարլը չի հանդուրժում երեսպաշտությունը, մեծամտությունը, մարդատյացությունը և հասկանում է, որ միայնակ պայքարի ելնելն անհիմաստ է: «Տուր մի գունդ ինձ նման կտրիճներ,- ասում է նա,- Գերմանիան կդառնա մի հանրապետություն, որի առաջ կուսանաց վանքեր կթվան Յոն ու Սպարտա»²⁵: Կարլը գիտակցում է, որ հասարակական չարիքի դեմ պայքարում միայնակ է: Իր սկզբունքներով, ձգտումներով և իդեալներով նա անհամեմատ բարձր է լույ իրենց շահին հետամուտ խմբակիցներից: Նույն տրամադրությամբ է համակված նաև Յունոն: Նա ունի երեսուն հոգուց բաղկացած ավագակախումբ, որի կեսը թուրքեր ու քրդեր են, որոնք պայքարում են միմիայն իրենց շահի համար: Այս է պատճառը, որ հեղինակը մի թուրք շինականի շուրթերով ավստսանք է հայտնում, որ «հայերի մեջ Յունոյի պես սրտոտներ քիչ կան...»²⁶: «Էդպես մի քանի Յունոներ պետք է լույս ընկներին...», - կարծիք է հայտնում նույն թուրքը²⁷:

Թե՛ Շիլլերը և թե՛ Պռոշյանն ի դեմս պատկերվող ավագակների ընդգծում են վեհ գաղափարների և անձնական մանր շահերի ակնհայտ հակադրությունը: Ավագակապետերը չեն թալանում հասարակ մարդկանց, չեն բռնանում հիվանդների, թույլ ու անօգնական ծերերի, կանանց ու երեխաների նկատմամբ: Ավելին՝ նրանք չեն ներում նման անմարդկային արարք թույլ տված ավագակներին: Իսկ ավարը մի դեպքում ամբողջությամբ բաշխվում էր խմբակիցներին (Յունո), մյուս դեպքում՝ իրեն հասանելիք երրորդ մասը բաժանվում էր որբերին կամ հատկացվում «ընդունակ տղաների ուսման համար» (Կարլ Մոոր):

Պռոշյանը քննադատում է կաշառակերությունը, որը բնորոշ էր ոչ միայն շահամոլ պաշտոնյաներին, այլև կարգազանց հոգևորականներին, որոնք այդ կերպ շրջանցում են օրենքները և խուսափում պատասխանատվությունից: Պատկերելով գինեմոլ ու հեշտասեր Մ. քահանային՝ Պռոշյանն անդրադառնում է ամբողջ հոգևոր դասին, որի ֆոնի վրա Մ. քահանայի զանցանքները մեղմ

²³ **Ֆ. Շիլլեր**, Ընտիր երկեր, Եր., 1952, էջ 49:

²⁴ Նույն տեղում, էջ 92:

²⁵ Նույն տեղում:

²⁶ **Պ. Պռոշյան**, Երկեր, Եր. 1987, էջ 339:

²⁷ Նույն տեղում:

երանգներ են ստանում: Մ. քահանան հայտնի է իր սրախոսություններով ու հանդուգն արարքներով: Նա չի ժխտում, որ անում է այն ամենը, ինչ արգելված է քահանային, որի համար ամեն տարի ամիսներով ու շաբաթներով զրկվում է քահանայական իրավունքից: Բայց և հաստատում է, որ ի տարբերություն իր մյուս կարգակիցների, ինքը պարզ մարդ է և «ամեն բան բացառկարա է անում»: «Ինձ ուրիշ տերտերներից չկարծես, որ երեսահանց հրեշտակ են ձևանում, իսկ ներսից սատանին **թարս են նալնում**, սատանին էլ խաբում են»²⁸: Մ. քահանան ընդունում է իր սխալները, բայց և շեշտում է, որ իր մյուս կարգակիցները «համ անում են, համ մարսում են» և դեռ պատիվների ու պարգևների են արժանանում: Նա քննադատում է կղերականությանը, որոնք արժանի չեն Աստծո սպասավորը կոչվելու: Ընդգծելով եկեղեցու և վանքերի ազգապահպան արժեքը՝ Մ. քահանան հույս է հայտնում, որ նոր սերունդը «կքննի չարիքի էական պատճառները և իր եկեղեցուն կնվիրի անձնանվեր պաշտոնյաներ, որոնք նոր շունչ, նոր ոգի կթափանցեն ժողովրդի մեջ և կորցրածի կրկնապատիկը ետ կբերեն»²⁹:

Հոգևոր դասի արատավոր ներկայացուցիչները չեն վրիպում նաև Շիլլերի հայացքից: Երբ Պատերը հեզնում, մեղադրում ու անիծում է Կարլին, վերջինս հիշեցնում է, թե ում է ինքը պատժել. միմիստրին, որը «ռանկական տիղմից դուրս գալով՝ երեսպաշտ քծնությամբ դարձել էր արքայի սիրելին, իր նախորդի անկումը շինել էր իր գահույթի պատվանդան, որբերի արտասուքը՝ բարձրանալու աստիճան», արքունի գանձապետին, որը «պատվո պաշտոններն աճուրդով էր վաճառում և իր շենքից քշում վշտահար ազգասերին», ինկվիզիցիայի կործանումը ողբացող մի տերտերի և այլն: Ապա նա քննադատում է այն հոգևորականին, ով եղբոր մեկ արատը «հարյուր Արգուսի աչքերով» տեսնում է, բայց՝ «կուրանում իր անձի վերաբերյալ...», ով հեզություն ու համբերություն է քարոզում՝ միաժամանակ զոհաբերելով մարդկանց: Կարլը մեղադրում է հոգևորականներին, ում խոսքն ու գործը հակասում են միմյանց, ովքեր «մերձավորի սեր են քարոզում, և անեծքով մերժում, քշում իրենց դռնից ութսունամյա կույր աղքատին...», ովքեր քննադատում են ազափությունը և «ոսկե ճարմանդներ հագնելու համար ամբողջ Պերուն ասպատակում են ու հեթանոս հնդիկներին գրաստի պես կառք լծում»: Նրանք մեղադրում են Հուդային, «մինչդեռ իրենցից ամեն մեկը պատրաստ է մի տասնյակ դահեկանով մատնել նույնիսկ Աստծո Երրորդությունը»³⁰: Կարլը նրանց փարիսեցի է անվանում, ում «ազնիվ վարքն ու օրինակելի ընթացքը» Աստծո զայրության է շարժում: Պատերին զարնացնում է ավազակապետի գոռոզ կեցվածքը, որն արհամարհանքով՝ իր գլխագինը սահմանող հրովարտակը բերող հոգևորականի դեմքին է շարտում. «...Իմ արհեստը հատուցումն է, և պաշտոնս՝ վրեժ ու ոխ»³¹:

Դրամայում պատկերված է հոգևորականի երկու տիպ: Ի տարբերություն Պատերի, Պաստոր Մոզերի կերպարն առավել մոտ է ազնիվ ու անշահախնդիր հոգևորականի տիպին: Նա է հորդորում Ֆրանցին աղոթել՝ նշելով, աշխարհում

²⁸ Նույն տեղում, էջ 296 (Ընդգծումը հեղինակինն է):

²⁹ Նույն տեղում, էջ 299:

³⁰ **Ֆ. Շիլլեր**, Ընտիր երկեր, Եր., 1952, էջ 105:

³¹ Նույն տեղում, էջ 106:

չկա ավելի ծանր մեղք, որքան հայրասպանությունն ու եղբայրասպանությունն են:

Քննվող ստեղծագործություններում սիրո թեման ևս չի անտեսվում: Թե՛ Կարլ և Ֆրանց, թե՛ Յունո և Ջաքո բևեռների հակադրությունների կիզակետում սիրելի էակներն են՝ «Ավազակներում»՝ Ամալիան, «Յունոն» վիպակում՝ Գյուլոն: Երկու դեպքում էլ մենք գործ ունենք բարոյական բարձր հատկանիշներ ունեցող կանանց հետ, որոնց հմայիչ արտաքինը, առաքինությունն ու հեզությունը, հաստատուն սերն ու նվիրվածությունը սիրած էակին մշտապես ներդաշնակության մեջ են: Սակայն Ամալիան, վերագտնելով իր սիրելիին, հասկանում է, որ նա այլևս իրեն չի պատկանում: Միակ բանը, որ նա ցանկանում է իր սիրելիից, մահն է, քանզի չի ուզում այլևս լքված ապրել: Կարլը, տուրք տալով ավազակների նախատիքներին, գնում է մի քայլի, որի մասին երբևէ չէր խորհել: «Մոորի սիրականը միայն Մոորի ձեռքով կմեռնի» ասելով՝ դաշունահարում է Ամալիային, ապա դիմում խմբակիցներին. «Դուք ինձ մի կյանք զոհ բերիք, մի կյանք, որ... լի էր խայտառակ ու գարշ գործերով. ես մի հրեշտակ զոհեցի ձեզ...»³²: «Պարտքդ տոկոսով հատուցեցիր: Դու արիր այն, ինչ որ ոչ ոք չէր անի իր պատվի համար»³³, - հնչում է ի պատասխան: Կարլի տառապանքն անսահման է, նա արտասվում է. «Մի սրբուհու կյանք սրիկաների կյանքի փոխարեն. չէ՞ որ սա մի անհավասար տրիտուր է...»³⁴: Նա գիտակցում է, որ կորցրել է ամեն ինչ և որ այլևս պայքարելն անիմաստ է. «Ամոթապարտ ու կորագլուխ վայր եմ դնում իշխանության արյունաթաթավ գավազանը...»³⁵: Նա հասկանում է, որ սխալվել է՝ կարծելով, թե կարելի է «աշխարհը ոճիրներով բարվոքել և օրենքները անօրենությանը վերականգնել»: Նա դատապարտում է իրեն՝ զոջալով իր անպատվաբեր անցյալի համար. «...**Ինձ նման երկու մարդ կարող էին հիմն ի վեր տապալել բարոյական աշխարհի ամբողջ շենքը**»³⁶: «Անպատված օրենքը և ոտնահարված կարգը» կարելի է մաքրագործել միայն զոհաբերությամբ, և այդ զոհն ինքն է լինելու՝ Կարլը: Նրա կյանքը վաղուց արդեն իրեն չի պատկանում: Բայց նա չի պատրաստվում մահացու մեղքով քավություն հայցել, այլ ցանկանում է ինքնական հանձնվել արդարությանը՝ դրանով իսկ օգնելով տասնմեկ երեխա ունեցող թշվառ մշակին, որը հռչակավոր ավազակին բռնելու համար կպարզևատրվի հազար ոսկով:

Յունոն ևս հրաժարվում է խմբից և անձնատուր լինում, բայց՝ որոշ ժամանակ անց: Նա «Աստծո սուրբ» դարձած՝ շարունակում է պայքարել ևս մի քանի ցեցերի դեմ, որոնց ոչնչացնելով՝ ինքնական կալանավորվում է և աքսորվում Սիբիր: Յունոյի կերպարի ամբողջ դրամատիզմը բացահայտվում է վեպի վերջում՝ նրա մենախոսության մեջ, որտեղ նա փորձում է գնահատել իր անցած ճանապարհը: «...Ավազակ...մարդասպան... և ոչ թե Աստծու ճանապարհովը գնացող...մի

³² Նույն տեղում, էջ 178:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում, էջ 179:

³⁶ Նույն տեղում (Ընդգծումը հեղինակինն է):

մարդ... թրի հետ խաղացող, ձեռներս արյունոտ ավազակ են»³⁷, ցավով փաստում է նա: (Հմմտ. Կարլ Մոորի ինքնաքննադատության հետ՝ «...ես այսպես գարշելի են այս հոյակապ աշխարհում... և ես մի հրեշ՝ այս սքանչելի երկրի երեսին»³⁸):

Այսպիսով, թե՛ Կարլ Մոորը և թե՛ Հունոն, ականա ընտրելով հետադիմության և հասարակական անարդարությունների դեմ պայքարի ավազկային եղանակը, իրենց պայքարում միայնակ են, որը և կանխորոշում է նրանց վախճանը: Ազնիվ ու անշահախնդիր այս երկու հերոսներին, որոնք երազում էին ընտանեկան պարզ երջանկության մասին, միավորում է նաև մի ընդհանուր ողբերգություն. անիրավության պայմաններում արդարություն հաստատելու նրանց նպատակը մնում է անիրագործելի:

ПРОИЗВЕДЕНИЯ Ф. ШИЛЛЕРА "РАЗБОЙНИКИ" И П. ПРОШЯНА "ГУНО"

А. С. Багоян

Статья посвящается рассмотрению образа "благородного разбойника" в произведениях "Разбойники" Ф. Шиллера и "Гуно" П. Прошяна. Методами сопоставления и сравнения выявляются особенности, аргументирующие влияние идей Шиллера на некоторые произведения П. Прошяна. Анализируются общие черты развития сюжетов, характера и поведения персонажей, вопросы морали, относящиеся как к дворянству, так и к духовенству. Подчеркиваются идеи справедливости и свободы, социального равенства, благородства и чести.

SCHILLER'S „THE ROBBERS,, (DIE RAUBER) AND PROSHIAN'S „HUNO,,

A. S. Bagoyan

The article presents the comparative description of the characters of Karl Moor and Huno in Schiller's „The Robbers,, (Die Rauber) and Proshian's „Huno,, respectively.

³⁷ Պ. Պռոշյան, Երկեր, Եր., 1987, էջ 407-408:

³⁸ Ֆ. Շիլլեր, Ընտիր երկեր, Եր., 1952, էջ 115: